ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր քաղաքում են ընդունել օզոնային շերտը պաշտպանելու արձանագրությունը։**

1) Դուբլին
2) Կոպենհագեն
3) Սիդնեյ
4) Մոնրեալ

2 **Ավստրալիայում թեթև արդյունաբերությունը առավելապես ինչի՞ վրա է հիմնված։**

1) բամբակ
2) կաուչուկ
3) վուշ
4) բուրդ

3 **Աֆրիկայում ո՞րը միապետություն չէ.**

1) Մարոկկո
2) Սվազիլենդ
3) Լեսոտո
4) Մոզամբիկ

4 **Ո՞ր կլիմայական գոտին *չի* ներառում ԱՄՆ տարածքը։**

1) արևադարձային
2) մերձհասարակածային
3) բարեխառն
4) մերձարևադարձային

5 **Մարակաիբո ծոցը ո՞ր պետության տարածքում է գտնվում։**

1) Արգենտինա
2) Բոլիվիա
3) Վենեսուելա
4) Էկվադոր

6 **Ո՞րը Ասիայի լճերից չէ.**

1) Բայկալ
2) Չադ
3) Սևան
4) Վան

7 **Աշխարհի բնակչության քանի՞ տոկոսն է ապրում Ասիայում:**

1) 40%
2) 30%
3) 60%
4) 50%

8 **Ասիական ո՞ր երկիրը *չունի* տնտեսական զարգացման ցածր ցուցանիշ:**

1) Մոնղոլիա
2) Բահրեյն
3) Աֆղանստան
4) Մյանմա

9 **Չինաստանը արտադրում է համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի**

1) 1/4-ը
2) 1/5-ը
3) 1/2-ը
4) 1/3-ը

10 **Ո՞ր լեզվաընտանիքի մեջ է մտնում վրացերենը:**

1) ալթայան
2) կովկասյան
3) հնդեվրոպական
4) չին-տիբեթական

11 **Ո՞ր երկրի տարածքավ *չի* անցնում Դանուբ գետը:**

1) Սլովակիա
2) Գերմանիա
3) Բելոռուս
4) Մոլդովա

12 **Ո՞րը ՌԴ սև մետաղաձուլական բազա *չէ*.**

1) Ուրալյան
2) Սիբիրյան
3) Մոսկովյան
4) Կենտրոնական

13 **Ո՞ր ազգի ներկայացուցիչներն են ամենաքիչը ներգաղթել Գերմանիա վերջին տասնամյակներին:**

1) ռումինացիներ
2) շվեդներ
3) իտալացիներ

4) լեհեր

14 **Ո՞ր երկիրն ունի չափազանց մեծ կախվածություն օտարերկյա ներդրումներից։**

1) Ֆինլանդիա
2) Էստոնիա
3) Իսլանդիա
4) Նորվեգիա

15 **Ո՞րը Հայկական հրաբխային բարձրավանդակի մաս *չէ*.**

1) Կենտրոնական
2) Հարավային
3) Հյուսիսային
4) Արևելյան

16 **Քանի՞ կմ է ՀՀ ամենաերկար ձգվածությունը։**

1) 380 կմ
2) 390 կմ
3) 360 կմ
4) 370 կմ

17 **Ցարական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանում ո՞ր վարչական միավորը *չկար։***

1) մարզեր
2) ոստիկանական տեղամասեր
3) նահանգներ
4) գավառներ

18 **Ընտրել ՀՀ բնական ռեսուրսների և հանքավայրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պղնձամոլիբդենային	1. Մեղրաձոր
բ. ոսկի	2. Թեղուտ
գ. նեֆելինային սիենիտ	3. Սվարանց
դ. երկաթ	4. Շվանիձոր

1) ա–3, բ–4, գ–1, դ–2
2) ա–3, բ–1, գ–4, դ–2
3) ա–2, բ–1, գ–4, դ–3
4) ա–2, բ–4, գ–1, դ–3

19 **Ո՞ր լեռներից եկած լավաներով է ծածկվել Լոռու գոգավորությունը.**

1) Ջավախքի
2) Գուգարաց

3) Փամբակի
4) Բազումի

20 **ՀՀ տարածքում տարվա ընթացքում օդային հոսանքների ո՞ր հոսքն է տիրապետում:**

1) արևմտյան
2) հարավային
3) հյուսիսային
4) արևելյան

21 **ՀՀ-ում ջրօգտագործմանը վերաբերող պնդումներից ո՞րն է առջարկվող լուծում համարվում.**

1) Ջրի չհաշվառված ծախսերի բարձր շեմ, անխնա ջրօգտագործում
2) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի կրճատմանն ուղղված մեթոդական ուղեցույցների մշակում
3) Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների և նորմատիվների բացակայություն
4) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի օպերատիվ մոնիթորինգի համակարգի բացակայություն

22 **ՀՀ տարածքի քանի՞ տոկոսն է ընդգրկում սելավների և ջրհեղեղների ազդեցության գոտին:**

1) 50%
2) 60%
3) 30%
4) 40%

23 **ՀՀ բնակչության արտագաղթի վերաբերյալ պնդումներից ո՞րը բացասական հետևանք *չէ:***

1) մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները
2) մեղմանում է գործազրկությունը
3) մարդկային կապիտալի արտահոսք
4) երկիրը զրկվում է տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից

24 **ՀՀ ո՞ր մարզում է գտնվում ամենահզոր արևային ֆոտովոլտային կայանը:**

1) Գեղարքունիք
2) Կոտայք
3) Արագածոտն
4) Սյունիք

25 **Ո՞ր հանքավայրի շահագործման ծրագիրն է դադարեցվել՝ արժանանալով հայաստանյան հասարակական և մասնագիտական շրջանակների սուր քննադատությանը՝ կապված բնապահպանական հնարավոր շատ բացասական հետևանքների հետ։**

1) Ախթալայի
2) Ագարակի
3) Ամուլսարի
4) Թեղուտի

26 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի մեքենաշինության ո՞ր ճյուղը գլխավորներից *չէր։***

1) ավտոմատացման համակարգերի արտադրություն
2) ռադիոէլեկտրոնային արդյունաբերություն
3) էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
4) ռոբոտների արտադրություն

27 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի ո՞ր քաղաքում կար սինթետիկ կորունդների արտադրություն։**

1) Եղեգնաձոր
2) Վաղարշապատ
3) Երևան
4) Վանաձոր

28 **Նշվածներից ո՞ր պարարտանյութը ՀՀ օրգանական գյուղատնտեսությանը բնորոշ *չէ*.**

1) թռչնաղբ
2) ազոտական պարարտանյութ
3) գոմաղբ
4) կենսահումուս

29 **Բնության և հասարակության բաղադրիչների տեղաբաշխումը, դրանց միջև առկա տարածական կապերը և օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է.**

1) պատմություն
2) քաղաքագիտություն
3) երկրաբանություն
4) աշխարհագրություն

30 **Ո՞րը քարտեզների դասակարգման սկզբունք չէ՞.**

1) ըստ նշանակության
2) ըստ ընդհանրացման
3) ըստ մասշտաբի
4) ըստ բովանդակության

31 **Ո՞րն աշխարհագրական թաղանթի գլխավոր հատկանիշ չէ.**

1) մակընթացություն
2) ամբողջականություն
3) գոտիականություն
4) զոնայականություն

32 **Ո՞ր մայրցամաքն է ամենամեծը.**

1) Եվրասիա
2) Լավրասիա
3) Պանգեյա
4) Գոնդվանա

33 **Ո՞րն է մայրցամաքային ծանծաղուտի ամենաստորին խորությունը.**

1) 300 մ
2) 400 մ
3) 100 մ
4) 200 մ

34 **Ընտրել «մարզ — մարզկենտրոն» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Սյունիք	ա. Հրազդան
2. Շիրակ	բ. Կապան
3. Արարատ	գ. Արտաշատ
4. Կոտայք	դ. Գյումրի

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Դ տառով.**

1) Բենգելյան
2) Կալիֆոռնիական
3) Ֆոլկլենդյան
4) Պերուական

36 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Գ տառով.**

1) Գվիանական
2) Մոզամբիկի

3) Գվինեական
4) Կուրոսիո

քարտեզ 2



37 **Քարտեզ 2-ում ո՞ր լեռնաշղթան է նշված Ա տառով.**

1) Ուրծի
2) Վայքի
3) Մեղրու
4) Մռավի

38 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով.**

1) Արմավիր
2) Շիրակ

3) Արագածոտն
4) Կոտայք

39 **Ո՞րը Համաշխարհային տնտեսության փուլ չէ.**

1) արդյունաբերական
2) հետարդյունաբերական
3) ագրարային
4) հետագրարային

40 **Ո՞րը Հարավային կոնի երկիր չէ.**

1) Մադագասկար
2) Բրազիլիա
3) Արգենտինա
4) Պարագվայ

41 **Ո՞րը արդյունաբերության տարածքային կազմակերպման ձև չէ.**

1) արդյունաբերական հանգույց
2) արդյունաբերական երկրամաս
3) արդյունաբերական կետ
4) արդյունաբերական կենտրոն

42 **Ո՞ր երկիրը երկաթաքար չի արտահանում.**

1) Հնդկաստան
2) Բրազիլիա
3) Ավստրալիա
4) Ճապոնիա

43 **Ո՞ր կլիմայական գոտին ունի ագրոկլիմայական շատ ցածր ներուժ.**

1) բարեխառն
2) մերձարկտիկական
3) արևադարձային
4) մերձարևադարձային

44 **Ո՞ր ը կապի տեսակ չէ.**

1) խողովակաշարային
2) ռադիո
3) հեռապատճենային
4) հեռախոս

45 **Ո՞ր ծառայությունն է արտադրական տեսակի.**

1) կապ
2) մշակույթ

3) լիզինգ
4) առևտուր

46 **Ո՞ր ը ինքնատիպ տարածաշրջան *չէ*.**

1) լեռնային
2) քաղաքակրթական
3) ծովային
4) համաաշխարհագրական

47 **Ո՞ր երկիրը *չի* համարվում նոր արդյունաբերական.**

1) Հոնկոնգ
2) Լյուքսեմբուրգ
3) Թայվան
4) Սինգապուր

48 **Ըստ բնույթի ինչպիսի՞ համամոլորակային հիմնախնդիր *չկա*.**

1) սոցիալական
2) կապի
3) համընդհանուր քաղաքական
4) բնատնտեսական

49 **Ո՞րը էկոլոգիական հավասարակշռության խախտման անմիջական հետևանք *չէ*.**

1) էկոլոգիական անվտանգություն
2) էկոլոգիական աղետ
3) էկոլոգիական լարվածություն
4) էկոլոգիական ճգնաժամ

50 **Ըստ հաշվարկների որքա՞ն կբավարարեն ածխի պաշարները մարդկությանը։**

1) 400 տարի
2) 300 տարի
3) 600 տարի
4) 500 տարի

51 **Ո՞րը «ժողովրդագրական պայթյունի» անմիջական հետևանք *չէ*.**

1) սոցիալական հակասությունների սրում
2) մահացության աճ
3) ժողովրդի բարեկեցության ցածր մակարդակ
4) գործազրկության աճ

52 **Ո՞րը մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչ *չէ*.**

1) քաղաքականություն
2) կրթվածություն
3) կենսամակարդակ
4) երկարակեցություն

53 **Ո՞րը աշխարհագրական մտածողության հատկանիշ չէ.**

1) համալիրություն
2) կոնկրետություն
3) տարածականություն
4) ռիթմիկություն

54 **Ո՞ր մեթոդի միջոցով է հայտնաբերվել օդի ջերմաստիճանի վերընթաց փոփոխության օրինաչափությունը:**

1) համեմատական
2) վիճակագրական
3) քարտեզագրական
4) նկարագրական

55 **ԱՏՀ-ում ո՞ր համակարգն է թույլ տալիս ծրագրային բաղադրիչների օգնությամբ բազաներից ընտրված տվյալների հիման վրա ստեղծել բոլորովին նոր քարտեզ.**

1) աշխարհագրական վերլուծության
2) տվյալների բազայի կառավարման
3) պատկերների մշակման
4) քարտեզների արտացոլման

56 **Գրել հրաբխային ծագման ապարների համարները.**

1) քարածուխ
2) մարմար
3) կրաքար
4) բազալտ
5) գրանիտ
6) տուֆ
7) քարաղ
8) կավ

57 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքի մեծությամբ համարվում են գերխոշոր.**

1) Կանադա
2) Ռուսաստան
3) Իրան
4) Գերմանիա
5) Ճապոնիա
6) Չինաստան
7) Ավստրալիա
8) Ուկրաինա

58 **Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով համարվում են հսկա.**

1) Իրաք
2) Հնդկաստան
3) Չինաստան
4) Բելոռուս
5) Լիբանան
6) Ֆրանսիա
7) Վրաստան
8) Ինդոնեզիա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Բելգիա
2) Ուկրաինա
3) Ֆրանսիա
4) Դանիա
5) Բրազիլիա
6) Շվեդիա
7) Քուվեյթ
8) Նորվեգիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է երեխաների բաժինը.**

1) Գերմանիա
2) Աֆղանստան
3) Հնդկաստան
4) Իսլանդիա
5) Պակիստան
6) Նորվեգիա
7) Շվեդիա
8) Նիգերիա

61 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականություն.**

1) Արգենտինա
2) Ինդոնեզիա
3) Ճապոնիա
4) Իտալիա
5) Պորտուգալիա
6) Սիրիա
7) Իրան
8) Վենեսուելա

62 **Տրված օվկիանոսների համարները դասավորել ըստ դրանց տարածքի մակերեսի նվազման կարգով.**

1) Ատլանտյան
2) Հնդկական
3) Խաղաղ

63 **Տրված լճերի համարները դասավորել ըստ նրանց բացարձակ բարձրության նվազման կարգով.**

1) Սևան
2) Կասպից
3) Տիտիկակա

64 Գետի միջին ծախսը 22 մ³/վ է: Որոշել գետի հոսքը 1 ժամում:

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ.ե.40˚-ի վրա է, մյուսը՝ արմ.ե.70˚-ի: **Որոշել քաղաքների միջև ամենակարճ հեռավորությունը:**

66 Երկրի մակերեսը կազմում է 200 000 կմ²: Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2000 000 քարտեզում:

67 Երկրի բնակչության թիվը 80 000 է, բնական աճի գործակիցը՝ 25‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 2700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 6 մլն. է, երկրի բնակչության թիվը՝ 8 մլն. է: Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհագրության կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Բնական աշխարհագրության ճյուղային գիտություններից են երկրաձևաբանությունը, կլիմայագիտությունը և հողերի աշխարհագրությունը:
2) Հնէաշխարհագրությունը, լանդշաֆտագիտությունը, մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը համալիր գիտություններ են հասարակական աշխարհագրության կազմում:
3) Որպես աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ աշխարհագրությունը մտնում է բնական գիտությունների, իսկ որպես մարդոլորտի հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ հասարակական գիտությունների համակարգի մեջ:
4) Հասարակական աշխարհագրական գիտություններն ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի ոլորտներում տեղի ունեցող բնական երևույթները:
5) Բնական աշխարհագրության կազմում առանձնահատուկ կարևոր տեղ ունի բնակչության աշխարհագրությունը, քանի որ նրա ուսումնասիրության առարկան սերտորեն կապված է բնական միջավայրի հետ:
6) Ընդհանուր աշխարհագրությունն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթների տարածքային փոփոխությունների համար:

70 **Ազիմուտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) 95° ազիմուտը հորիզոնի հյուսիարևելյան կողմում է:
2) 115° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:
3) Հյուսիսային ազիմուտը 0° կամ 360° է:
4) Արևմուտքի ազիմուտը 90° է:
5) Հարավի ազիմուտը 180° է:
6) 105° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է: